

## **Նորակոչիկներին շնորհավորեց ու բարի ճանապարհի մաղթեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը**

-Ծնողների դեմքին անթաքույց հուզմունք են նկատում, բայց դա, անկասկած, հպարտության հուզմունք է: Ձեր զավակները ծնվեցին Հայաստանի անկախության ծննդի հետ, հասակ առան ու հիմա պատրաստ են այդ անկախության պաշտպանմանը:

Սիրելի նորակոչիկներ, ամուր ու ուժեղ եղեք, իմացեք, որ մեր պետությունը միշտ ձեր կողքին է: Մեր երկրի սահմաններն օրեցօր ամրապնդվում են, դառնում ավելի անվտանգ, մեր բանակը զինվում է ամենաարդիական սպառազինությամբ, իսկ դուք անելիքներ շատ ունեք մեր երկրի սահմանների պաշտպանության գործում: Մեզ ու մեր հայրերին բախտ չվիճակվեց Հայոց բանակի զինվորը դառնալու, բայց դուք բախտավոր եք, որ կրում եք Հայոց հայրենիքի պաշտպանները լինելու պատիվը:

Գավառի զինկոմ, փոխգնդապետ Արմեն Հովսեփյանը, բարի ծառայություն մաղթելով նորակոչիկներին, միաժամանակ տեղեկացրեց, որ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի նախաձեռնությամբ եւ հրամանով նորակոչիկները կայցելեն Հայաստանի պատմության թանգարան, Մատենադարան, Եռաբլուր եւ Ծիծեռնակաբերդ, իսկ զորամասեր մեկնելու վիճակահանությունը կկայանա հուլիսի 3-ին:

Նորակոչիկների մեկնման պատվին Գավառի հրապարակում տրվեց համերգ, որտեղ հնչեցին ռազմահայրենասիրական երգեր:

Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի նախագորակոչային բաժնի վարիչ Տիգրան Հակոբյանի տեղեկացմամբ՝ հուլիսի 2-ին հանդիսավորությամբ նորակոչիկների առաջին հավաքի մասնակիցները Հայոց բանակ ճանապարհվեցին նաեւ Մարտունու, Սեւանի եւ Վարդենիսի զինկոմիսարիատներից:

Ջորակոչի հետ մեկտեղ սկսվել է նաեւ զորացրումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերից, եւ Գեղարքունիքի մարզի համայնքներում հուլիս ամսի ընթացքում մարդիկ հպարտությամբ ու աչքալուսանքի խնջույքներով դիմավորում են Հայոց բանակի շարքերում զինծառայությունն ավարտած իրենց զավակներին: Պաշտոնական տվյալներով՝ մեր մարզի ծնողները հուլիսի ընթացքում կդիմավորեն զինծառայությունն ավարտած ավելի քան 700 զինվորների, որոնց ընտանիքներում ավանդական են մնում ինչպես բանակ մեկնելու, այնպես էլ բանակից վերադառնալու մասսայական խնջույքները:

Ջինծառայողների ծնողներն ու հարազատները ուրախությամբ ու անթաքույց հպարտությամբ են դիմավորում իրենց զավակներին, ազգակիցների ու համազուղացիների աչքալուսանքն ընդունում քեֆի առատ սեղանների շուրջ, երգով ու պարով, առանձնակի հանդիսավորությամբ: Այս ոգեւորությունը փոխանցվում է նաեւ ապագա զորակոչիկներին ու նրանց ընտանիքներին, ցրում բանակային ծառայությունից խուսափելու ելքեր գտնելու տրամադրությունները:

Ծառայության մեջ աչքի ընկած շատ զինվորներ հպարտությամբ իրենց հարազատներին ցուցադրում են զորամասերում ստացած պարգևները՝ բարձրացնելով մեր բանակի վարկը յուրայինների եւ համազուղացիների մոտ:

